ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ 9 ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի 2016թ. 9 ամսվա բյուջեի կատարումը ընթացել է հետևյալ ցուցանիշներով՝

Եկամուտների կատարում

Համայնքի 2016թ. 9 ամսում համայնքի բյուջեի եկամուտների պլանը կատարվել է 77.1%-ով, 499.4 մլն. դրամ ճշտված պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 384.8մլն. դրամ: Նախորդ՝ 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ համայնքի բյուջեն գերակատարվել է 4.2%-ով կամ ավել եկամուտները կազմել են 15.5 մլն. դրամ:

2016թ. 9 ամսվա բյուջեի վարչական մասը կատարվել է 93.0%-ով / պլան 369.8մլն. դրամ, փաստացի 344.1մլն. դրամ /: 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատ բյուջեի վարչական մասում պակաս եկամուտները կազմել են 11.3մլն. դրամ կամ վարչական բյուջեի եկամուտները 2015թ. համեմատությամբ պակասել են 3.2%-ով: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 72.8%-ով / պլան 94.4 մլն. դրամ, փաստացի 68.8 մլն. դրամ /: Նախորդ՝ 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սեփական եկամուտները պակասել են 5.9%-ով կամ սեփական եկամուտների հավաքագրումը թերակատարվել է 4.3 մլն. դրամի չափով:

2016թ. 9 ամսվա ֆոնդային բյուջեն կատարվել է 31.3%-ով / պլան 129.6 մլն. դրամ, փաստացի 40.7 մլն. դրամ /, 2015թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ֆոնդային բյուջեի եկամուտները ավելացել են 26.8 մլն. դրամ կամ 1.9 ագամ:

Վարչական բյուջեի թերակատարումը կապված է գույքահարկի, հողի հարկի, պետական տուրքերի, հողի վարձավճարի պլանների թերակատարման իսկ ֆոնդային բյուջեի թերակատարումը կապված է հողերի գծով օտարումների բացակայության հետ:

Եթե «Սևան» ազգային պարկը 2015թ. նույն ժամանակաշրջանում վճարել էր 7.1 մլն. դրամ հողի վարձավճար, ապա 2016թ. ընթացքում ոչ մի լումա չի վճարել:

Համայնքի 2016թ. 9 ամսվա բյուջեի եկամուտների կատարման ավելի մանրամասն տվյալները և համեմատականը 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ բերված է ***թիվ 1 հավելվածում:***

Ծախսերի կատարում

Եկամուտների կատարման մակարդակից ելնելով՝ կատարվել է համայնքի 2016թ. 9 ամսվա բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 73.8%-ով: 512.9 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 378.6 մլն. դրամի ծախս կամ թերակատարումը կազմել է 134.3 մլն. դրամ / 26.2% /:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2016թ. 9 ամսվա բյուջեի ծախսերը կատարվել են տարբեր տոկոսներով: Կրթության, մշակույթի ծախսերը ֆինանսավորվել են 81.3 տոկոս: Վարչական բյուջեի ծախսերը ապահովվել է 88.7%-ով / 373.5 մլն. դրամ պլան, 338.6 մլն. դրամ փաստացի ծախս /, թերակատարումը կազմել է 34.9 մլն. դրամ, այդ թվում, 35.1 մլն. դրամ՝ կրթության և մշակույթի ծախսեր, 14.9 մլն. դրամ համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ և այլն:

2015թ. 9 ամսվա համեմատությամբ 2016թ. նույն ժամանակաշրջանի վարչական բյուջեի ծախսերը պակաս են կատարվել 1.2 մլն. դրամ կամ 0.3 %-ի չափով:
2016թ. 9 ամսվա համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել է 39.5%-ով / 189.1 մլն. դրամ պլան, 74.8 մլն. դրամ փաստացի ծախս /, նախորդ 2015թ. 9 ամսվա համեմատությամբ ֆոնդային բյուջեի գծով ավել ծախսերը կազմել են 16.7 մլն. դրամ:
Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 34.8 մլն. դրամի չափով ուղղվել է ֆոնդային բյուջե՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:
Համայնքի բյուջեի 2016թ. 9 ամսվա ծախսերը և համեմատականը 2015թ. 9 ամսվա նկատմամբ բերված է ***թիվ 2 հավելվածում:***
Համայնքի 2016թ. 9 ամսվա բյուջեից վճարվել է 49.7 մլն. դրամի չափով ասֆալտապատման, փոսային նորոգում, 14.5 մլն. դրամի չափով «Զարթոնք» մ/մ շենքի հիմնանորոգման գծով համայնքային ներդրում կառուցվել է փողոցային լուսավորության ցանց 3.3 մլն. դրամի չափով, 5.7 մլն. դրամի չափով կատարվել է ընդհանուր բնույթի կապիտալ ծախսեր ծախսեր և այլն:

Պարտքեր

Համայնքի 01.01.2016թ. դրությամբ համայնքի ֆոնդային բյուջեի պարտքը կազմում էր 175.4 մլն. դրամ:
Առ 01.11.2016թ. դրությամբ այն կազմում է 172.7 մլն. դրամ:
9 ամսում ընդհանուր առմամբ մարվել է 46.8 մլն. դրամ, այդ թվում՝
- 44.9 մլն. դրամ փոսային հիմնանորոգման պարտք՝ տարբեր կազմակերպություններին
- 1.9 մլն. դրամ փոսային հիմնանորոգման նախագծի մշակման պարտք: